№ 78 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 13 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 13 № 78

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտական գրականութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից. Նոր լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աստրիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից.

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I

Գիտական գրականութեան բացակայութիւնը,—Հայոց գրականութեան ամենադգալի պակասութիւններից մէկն է։ Գուցէ մեր գրականութեան ոչ մի ճիւղը, ինչպէս ցոյց են տալիս կենդանի փաստերը, այնքան խղճուկ և աղքատ չէ, որքան գիտական ճիւղը. մենք չունենք ոչ գիտական ինքնուրոյն աշխատութիւններ, և ոչ էլ թարգմանական գիտական աշխատութիւններ, և այդ ճիւղին պատկանող գրքերը այնքան հազւագիւտ են մեր մէջ, որ հայոց գրականութեան կողմնակի ուսումնասիրողը կատարեալ իրաւունք կունենայ կարծելու, թէ առհասարակ մեր գրականութիւնը կամ չէ ըմբռնել և չէ ըմբռնում գիտական գրականութեան կարևորութիւնը և նշանակութիւնը և կամ դիտմամբ հակառակ է եղել այդ ճիւղի հարստանալուն և աճելուն։

Գիտական գրականութեան բացակայութիւնը մեր նոր գրականութեան մէջ, նրա վերածնութեան սկզբի շրջաններում, ունէր իր պատճառները։ Իր վերածնութեան սկզբի շրջաններում հայոց գրականութիւնը տոգորված լինելով յայտնի ձգտումներով, և ընկնելով մի քանի որոշ, հասարակական մաքերի և տենդենցիաների ետևից, բնականաբար պէտք է անուշադրութեան տար գրականութեան գիտական մասը, իր գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացնելով ուրիշ ճիւղերի վրա։ Սակայն կայ և մի երկրորդական հանգամանք, որը իր կողմից կամայ-ակամայ պէտք է մեռելութեան մէջ պահէր գիտական գրականութիւնը։ Այդ հանգամանքը մեր ժողովրդի անգրագիտութիւնն է, և այն, որ առհասարակ գիտական բովանդակութիւն ունեցող գրքերը հեշտութեամբ չէին կարող մուտք գործել և տարածվել մի այնպիսի հասարակութեան մէջ, որը դեռ նոր էր սկսում ծանօթանալ գրական լեզուի հետ, որի մէջ գրագիտութիւնը շատ աննշան տոկոս էր կազմում, և որին դէպի ընթերցասիրութիւն գրաւելու համար հարկաւոր էր շօշափել նրա կեանքի ամենակենդանի կողմերը, հարկաւոր էր խփել նրա զգացմունքների թելերի վրա, արծարծելով ամենից առաջ նրա համար կենսական և շատ առօրեայ նշանակութիւն ունեցող հասարակական խնդիրներ և դաղափարներ....

Սակայն այդ շրջանը արդէն անցաւ, և մի քառորդ դար բոլորելուց յետոյ, մեր ժողովրդի մէջ ընթերցանութիւնը այնքան արդէն տարածված է, գրագիտութեան տոկոսը այնքան արդէն բարձրացած է, և ընդհանրապէս մեր ժողովրդի մտաւոր շարժման պահանջները այնքան լայնացած և բարդված են, որ ժամանակ է արդէն ուշք դարձնել մեր գրականութեան գիտական կարևոր ճիւղի վրա։

Գիտութիւնը ոյժ է, և մատակարարել մի անհատին կամ մի ժողովրդին գիտութիւն, կը նշանակէ նրա ձեռքը մի նոր ոյժ տալ կեանքը հարթելու և առաջ գնալու համար, այն էլ մի այնպիսի ոյժ, որը երբէք չէ խորտակվում, չէ ընկճվում, այլ միշտ ինքն է խորտակում և ընկճում այն բոլոր խոչընդոտները, արգելքները և նախապաշարմունքները, որոնք կապում են ժողովրդին անշարժութեան շղթաներով, լցնում նրա սիրտը յուսահատութեամբ, իսկ գլուխը՝ բթացնող նախապաշարմունքներով....

Գիտական գրականութիւնը, որը անկասկած ապագայում պատշաճաւոր տեղ պէտք է բռնէ մեր գրականութեան մէջ,—երկու մասից կարող է բաղկացած լինել. մի մասը կը պարունակէ իր մէջ այն զուտ գիտական, մասնագիտական հետազօտութիւնները և աշխատութիւնները, որոնք գիտութեամբ պարապողներին և կամ հասարակութեան ինտելիգենտ դասակարգին միայն մատչելի կարող են լինել. միւս մասը գիտութեան աւելի տարրացրած մասը կը լինի, որը կը պարունակէ իր մէջ ժողովրդացրած գիտական բովանդակութեան այնպիսի գրքեր, որոնց միջոցով կարելի կը լինի ժողովրդի ընթերցող դասակարգի մէջ տարածել գիտելիքներ բնախօսութիւնից, կենդանաբանութիւնից, բուսաբանութիւնից, քիմիայից, ֆիզիկայից, տիեզերագրութիւնից և այլն և այլն։

Անկասկած գիտական գրականութեան առաջին տեսակը, այսինքն գիտնական—մասնագիտական գրքերը և աշխատութիւնները մեր գրականութեան մէջ բազմանալ և աջողութիւն ունենալ չեն կարող, քանի որ մենք նախ և առաջ չունենք հայ լեզուով գրող գիտնականներ, և երկրորդ՝ մեր գրականութեան այժմեան հանգամանքներում այդ տեսակ գրքեր թէ դժուարութեամբ կը հրատարակվեն և թէ դժուարութեամբ կը տարածվեն։

Բայց դրա հակառակ, գիտական գրականութեան միւս տեսակը, այն է հասարակութեան մատչելի գիտական, տարրացրած, ժողովրդացրած հրատարակութիւնները մեծ աջողութիւն կունենան և մեծ ծառայութիւն կարող են մատուցանել։ Իսկ թէ ինչպէս,—այդ մասին կը խօսենք միւս անգամ։

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ

Յուլիսի 2-ին

Յօթանանական թւերի վերջերում, միանգամից կարողացանք կենդանութիւն տալ դպրոցական գործին։ Կարճ միջոցում ունեցանք դպրոցական ընդարձակ շինութիւն, որ հազարներ նստեց. զգալի կերպով դրամագլուխը աճեց. Թաիրեանի 4,000 ր. նուէրը ստացվեց. դպրոցական գրադարան հիմնվեց, մի օրվայ մէջ 200 ռուբլի ժողովելով այդ նպատակի համար. այնուհետև թատրոնական ներկայացումները հետզհետէ հարստացրին գրադարանը և գրքերի թիւը գրեթէ հազարի հասցրին. Խնդրամատոյց եղանք հանդուցեալ կաթողիկոսին եկեղեցական գրամների տոկոսը յատկացնել բացվելիք օրիորդական դպրոցին և պ. Գ. Խանդաղեանի միջամտութեամբ ամենակարճ միջոցում այդ հարցը լուծվեց. բացվեց օրիորդական դպրոցը, հրաւիրվեցին բարեխիղճ ուսուցիչներ, դպրոցները ստացան կանոնաւոր ընթացք և ցանկալի առաջադիմութիւն։ Բաւական չէր այդ. չը մոռացանք և մեր հեռու հայրենակիցներին. յիշեցինք մեր պարքը, օգնեցինք Միացեալ ընկերութեան, Վանի սովելոց 800 ր., իսկ վերջերում Երուսաղէմին, Զէյթունի հրկիզեալներին 500 ռուբլի գումարով, էլ չենք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

X

Վերջապէս այսօր, յուլիսի 8-ին, սկսեցի ուշադրութեամբ այցելել Մարսեան դաշտի վրա զետեղված ցուցահանդէսը, որը այժմեան համաշխարհային ամբողջ ցուցահանդիսի գլխաւոր մասը կարելի է համարել։ Ցուցահանդիսի այս մասը կատարելապէս այցելելուց յետոյ կարելի է դաղափար կազմել քաղաքակիրթ մարդկութեան առաջադիմութեան ամենավերջին արդասիքների մասին։

Հերթով կը պատմեմ, թէ ինչ մասերն եմ այցելել հետզհետէ։

Նախ պէտք է ասեմ, թէ ցուցահանդիսի այդ ամբողջ մասի վրա տիրապետում է Էյֆէլեան աշտարակը, ուրեմն ես էլ սկսեցի այդ աշտարակը շրջապատող շինութիւններից։

Անդրատլանտեան պանօրամայից, որի մասին արդէն խօսեցի, և որը կանգնած է Մարսեան դաշտի սահմանագլխում, սկսվում են այլ և այլ շինութիւններ, որոնք ներկայացնում են մարդկային բնակութեան պատմութիւնը և զանազան դարերի և ազգերի բնակութեան ոճերը։ Գարնիէ յայտնի էր արդէն որպէս Պարիզի Մեծ-Օպէրայի շինութեան կառուցանողը։

Հասնելով Էյֆէլեան աշտարակին և մտնելով նրա կամարների տաք՝ ձեր աչքի առջև բացվում են հրաշալի ֆօնտաններ, որոնց քանդակագործ հսկայ գրուպաները փոխաբերական կերպով ներկայացնում են՝ համաշխարհային հանճարը, ապա մարդկային առաջադիմութիւնը, այնուհետև Պարիզ քաղաքը, որը վառած ջահը ձեռքին բռնած լուսաւորում է աշխարհը և շրջապատված է՝ գիտութիւնը, արդիւնաբերութիւնը, գեղարուեստը և երկրագործութիւնը ներկայացնող արձաններով։ Աւելի հեռու մենք տեսնում ենք նոյնանման ֆօնտաններ, որոնց արձանները փոխաբերական կերպով ներկայացնում են մեզ՝ խաղաղութիւն և աշխատանք, իսկ միւս կողմից ծուլութիւն և նախանձ։ Այդ բոլոր ֆօնտանները, որոնք կատարեալ ստեղծագործութիւններ են, կառուցել են պ.պ. Սէնտ—Վիդալ, Ֆորմիժէ և Կուլան։ Այդ ֆօնտանները, ինչպէս մի անգամ արդէն ասեցի, գիշեր ժամանակ լուսաւորված են լինում՝ դազային, բենգալեան և էլէկտրական գոյնզգոյն լոյսերով....

Հիմա սկսենք Էյֆէլեան աշտարակի չորս կողմը գտնվող պավիլիոններն այցելել և սկսենք աշտարակի աջ կողմից։ Նախ մտնենք Սուէցի ջրանցքի պավիլիոնը։ Այդտեղ մենք գտնում ենք ապակու տակ դրված Սուէցեան ջրանցքի մի ահագին և մանրամասն պլանը, ապա նոյն սրահում բազմաթիւ յատակագծեր, պատկերներ, լուսանկարներ, նկարներ, որոնք ներկայացնում են մեզ թէ յիշեալ ջրանցքը ներկայ դրութեան մէջ և թէ այդ ջրանցքը փորելու ժամանակ, ներկայացնում են մեզ Սուէցեան ջրանցքի ափերում եղած քաղաքների, ինչպէս Սուէց, Պորտ-Սաիդ, Իսմայիլիա քաղաքների տեսարանները, երկրի ժողովրդի տիպերը, ջրանցքում երթևեկող այլ և այլ ազգերին պատկանող նաւերի պատկերները, և այլն։

Սուէցեան ջրանցքի պավիլիոնի մօտ գտնվում են ինքնուրոյն ճարտարապետութեամբ շինված հարաւային Ամէրիկայի երկիրների՝ Արգէնտինա, Մէկսիկօ, Վէնեցուէլա, Բոլիվիա և Չիլի հանրապետութիւնների և Բրազիլիա կայսրութեան արդիւնքների բաժինները։

Արգէնտինայի հանրապետութեան ցուցահանդէսը զետեղված է մի չքեղ, սպանիական ճարտարապետութեան ոճով կառուցված, երեք-յարկանի պալատի մէջ, հարաւային Ամէրիկայի միւս երկիրների պավիլիոններն էլ կառուցված են սպանիական ոճով, իսկ Մէկսիկայի արդիւնքների պալատը աչքի է ընկնում իր ինքնուրոյն ոճով. նա ամբողջապէս քարից և երկաթից է շինված և մի և նոյն ժամանակ նրա ճարտարապետութեան ոճը՝ հին-միկսիկական է, այսինքն այն ոճը, որով կառուցված են Մէկսիկայի մէջ գտնված հին տաճարները, որոնք կային այդ երկրում նախ քան եւրոպացիների դալը։ Այդ ոճը, ինչպէս յայտնի է, սաստիկ յիշեցնում է եգիպտական ճարտարապետութեան ոճը։ Արգէնտինայի հանրապետութեան շքեղ և շնորհալի, գեղեցիկ բալկոններով շրջապատված երեք-յարկանի պալատը՝ այն առանձնայատկութիւնն ունի, որ ստորին յարկի առաստաղը (ուրեմն երկրորդ յարկի յատակը) ամբողջապէս երկաթից և հաստ ապակուց է շինված, այնպէս որ ստորին յարկի դահլիճների վրա ընկնող լոյսը անցնում է երկրորդ յարկի յատակի միջով։

Մինչև այժմ բոլորս հաւատացած էինք, որ հարաւային Ամէրիկայի հանրապետութիւնները հարուստ են միմիայն բնական արդիւնքներով, կամ աւելի լաւ է ասել՝ հում նիւթերով։ Սակայն այցելելով ցուցահանդիսի թէ վերև յիշված երկիրների բաժինները, և թէ Նիկարագվա, Սալվադոր, Ուրուգուայ, Սան-Դոմինգօ, Գուատեմալա հանրապետութիւնների բաժինները, բայց մանաւանդ, ինչպէս արդէն ասեցի, Արգէնտինեան հանրապետութեան ճոխ բաժինը,—մարդ համոզվում է որ հարաւային Ամէրիկայի այդ երկիրները, բացի բնական հարուստ արդիւնքներ, երկրի առատ հում նիւթեր ներկայացնելուց՝ արդիւնաբերում են թէ ձեռագործ, թէ գործարանական և թէ գեղարուեստական այնպիսի կատարելագործված, նուրբ առարկաներ, որ արդէն աջողութեամբ սկսում են մրցել թէ Հիւսիսային Ամէրիկայի, և թէ Եւրոպայի նոյնանման արդիւնաբերութեան հետ։ Արգէնտինեան հանրապետութեան բաժնի հարստութիւնը, մանաւանդ, աննկարագրելի է։ Ոչ թէ միայն ոսկի, արծաթ, թանգագին քարեր, մետաղներ, մարմարիոն, գոյնզգոյն օնիկս, կաշիներ, նաւթ, բամբակ, բուրդ, գինիներ, մետաքս և այլն այցելուի ուշադրութիւն են գրաւում, բայց և հրաշալի մէբէլներ, կանանց և տղամարդկանց ճաշակով շինված զգեստներ, գըլխարկներ, կօշիկներ և ձեռնոցներ, նուրբ գորգեր, քանդակագործված իրեր, կանանց նուրբ զարդեր, գեղեցիկ լուսանկարներ, ձեռագործ և գործարանական բազմատեսակ առարկաներ, կատարելագործված չոգեշարժիչներ (ինչպէս, օրինակ, մսի և առհասարակ մթերքների պահեստներում օդը սառեցնելու ահագին չոգեմեքենան), —այդ բոլորը, իրաւամբ կարելի է ասել, այն աստիճան նուրբ, կատարեալ և կատարելագործված է, որ ամենամեծ վստահութեամբ այդ երկիրների արդիւնքները կարող են մրցել թէ հիւսիսային Ամէրիկայի և թէ Եւրոպայի նոյնանման արդիւնքների հետ։ Առհասարակ ասում են որ վերջին մի քանի տասնեակ տարիներ հարաւային Ամէրիկայի երկիրները այնպիսի մեծ առաջադիմութիւն են արել տեխնիական արդիւնաբերութեան մէջ, որ սկսել են արդէն ահագին քանակութեամբ իրանց արդիւնագործութիւնները վաճառահանել Ամէրիկայի Միացեալ-Նահանգները և նոյն իսկ Եւրոպա և այդ վերջին երկիրների գումարները սկսել են հոսել դէպի հարաւային Ամէ-

յիշում այլ և այլ մանր-մունր հանգանակութիւններ։ Այսչափ մտաւոր շարժում, այսչափ մխիթարական գործեր՝ մեզ իրաւունք էր տալիս «Մշակի» 79 թիւ թղթակցութիւններով Ղարաքլիսան օազիսի նմանեցնել, մեր անշարժութեան դատապարտված գաւառում։

Բայց մեզ վիճակված չէր երկար մխիթարվել մեր վերակենդանութեամբ. անցան այն օրերը և այսօր անցեալ կեանքի հակապատկերն ենք տեսնում. արագ քայլերով յետ ենք մղվում նիւթապէս և բարոյապէս։ Ժողովրդի անմխիթար դրութիւնը իր տխուր հետևանքներն ունեցաւ. գործողները վհատեցին և անգործունէութեան դատապարտվեցան. ոչ միայն նոր բան ձեռնարկել, այլ և եղածը պահպանել դժուարանում ենք. ներկայացումներ այլ ևս մեզ չեն աջողվում, որովհետև տոմսակների վաճառումը եթէ չասենք անհնարին, գոնէ մեծ դժուարութիւնների հետ է կապված. ձեռագործութեան տոմսակների վաճառումն անգամ քար ու կապանի է դէմ ընկնում. դպրոցի շինութեանը վտանգ է սպառնում. եթէ շուտով չը վերանորոգենք և տանիքը թիթեղով կամ կղմինտրով չը ծածկենք, հազիւ թէ սեպտեմբերից կարելի լինի այնտեղ ուսումն շարունակել. սովատանջ ժողովրդից ոչինչ սպասելիք, իսկ հարուստներից բարիք յուսալ.... ամօթից կարմրում ենք։ Երանի թէ սխալված լինէինք և մեր կրէտոնները մեզ ամաչցնէին իրանց մարդասէր վարմունքով, բարի գործերով։ Իսկ մեր տանուտէրները կարծես ընտրվում են ամեն բան տակն ու վրա անելու. ոչ միայն մեր հասարակական միւս գործերը ընկնում են դրանց չնորհով, այլ և դպրոցին աննչան, փոքրիկ ծառայութիւն անտես է առնվում։ Հոգաբարձութիւնը անել դրութեան մէջ՝ իր անելիքը չը գիտէ. հանգանակութիւն սկսել ներկայ ծանր հանգամանքներում,—աջողութիւնը կասկածելի է. հազիւ հաղ ծախսերն են ծածկում. արդիւնքի ուրիշ աղբիւրներ չը կան. դրամագլխի տոկոսը դժուարութեամբ է ժողովվում. աշակերտների թոշակադրամը գրեթէ զրօի է հասնում (տարեկան 2—3 ր.) և այն էլ կանոնաւոր չէ ստացվում, տիրապետող աղքատութեան չնորհով. և եթէ հոգևոր իշխանութիւնը պնդեց իր որոշումը ի կատար ածելու՝ մեր երիկականների մասին 3—5 ր. ժողովել աշակերտներից յօգուտ թեմական դպրանոցի,—հաւատացած ենք, որ մեր դպրոցը կիսով չափ դատարկ կը մնան։ Զարմանալին այն է, որ թշուառներն անգամ բացառութիւն չեն կազմում. այն աշակերտը, որ ցընցոտիներով, շատ անգամ ոտաբոբիկ է յաճախում դպրոց, պարտաւորված պէտք է 2—3 ր. վճարէ. վատ դրութիւն է։

Այսպէս թէ այնպէս վերաշինութիւնը անհրաժեշտ է սկսել և այն էլ շատ շուտ։ Շոյտով հոգաբարձուների նոր ընտրութիւն է լինելու. սպասում ենք հոգևոր կառավարութեան նախանդամի գալստեան. ցանկալի կը լինէր որ հայր Կոստանեան իր ոյժերը մի անգամ էլ մեր օգտին գործ դնէր. եթէ մի փոքր հանդուն կերպով հանգանակութիւն սկսվէր, գուցէ կարելի լինէր մասամբ գոնէ գործը թեթևացնել։

Ղարաքլիսեցի

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից մեզ գրում են. «Յուլիսի 4-ին այստեղ հաստատ անգլիական լրագիրները հաղորդում են, թէ Կ. Պոլսի դերմանական դեսպանը մասնաւոր հրահանգներ է ստացել Հայոց խնդրի համար։»

—

Իզմիրեան կտակի Կ Պոլսի գործադիր յանձնաժողովը, յունիսի 29-ին, Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան օրը, քննելով իր ստացած աշխատութիւնները՝ հետևեալ վճիռն է կայացրել. «Գործադիր Յանձնաժողովս՝ իւր վերջին նստին՝ որ ընդ նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր գումարեցաւ, մի առ մի նկատողութեան առնելով կատարուած քննութեանց գրութիւնքը, ըստ ամենայն մասանց արժանի դատեց Սահակ-Մեսրոպեան մրցանակին «Նիւթեր Ազգային Պատմութեան» ստուար գործը, և որոշեց կտակեալ պարգևը նուիրել հեղինակին Պարոն Գալուստ Շերմազանեանին, ի պսակ իւր բազմամեայ աշխատութեանց և այս կարևոր գործոյն, որ 453 մեծադիր երեսներէ կը բաղկանայ, և է արդարև մի ամբողջացուցիչ մասն մեր Ազգային Պատմութեան անցեալ և ներկայ դարուց, որ մինչև ցայժմ թերի մնացած էր։ Յանձնաժողովս բանակցութեան պիտի մտնէ Հեղինակին հետ, որ այս խիստ հետաքրքրական, բազմապատում և օգտակար երկասիրութիւնն անմիջապէս տպագրութեան յանձնէ»։

—

Մեզ ուղարկված է տպագրելու հետևեալ նըկատողութիւնը. «Ի նկատի ունենալով, որ մեր մէջ կան պատկերազարդ հանդէսներ, և անկասկած կը շարունակվեն լինել, ուստի թող աւելորդ չը համարվի այս փոքրիկ նկատողութիւնը։ Պատկերազարդ հրատարակութիւնները ամեն տեղ ունեցել են և ունեն իրանց raison d'être-ը։ Մարդկանց մեծ մասը հեռու ապրելով կենտրոններից՝ միմիայն դրանց միջոցով է կարողանում ծանօթանալ գեղարուեստական աշխարհի նորութիւնների, նշանաւոր գործիչների, շինութիւնների, վերջապէս գիտութեան նորանոր գիւտերը պարզաբանող պատկերների հետ։ «Իլլիստրասիօնները» լինելով և գրականական հրատարակութիւն, պիտի գոհացնեն գրականական նոյն իսկ ամենաթոյլ կրիտիկայի պահանջները։ Արդ, ինչ դրութեան մէջ է այդ տեսակ հրատարակութիւնների գրականական մասը, տալիս են արդեօք նրանք իրանց ընթերցողներին կարդալու նիւթ և ինչ տեսակ։ Մոտիկ ծանօթ չը լինելով արտասահմանեան հրատարակութիւնների հետ, մենք մեր խօսքը կը մասնաւորենք ռուսաց պատկերազարդ հրատարակութիւնների մասին, դուցէ դրանց մէջ գտնենք մեզ համար խրատական օրինակներ։ Ինչ են տալիս դրանք ընթերցողներին. «Ниву»-ն, «Иллюстрированный Міръ»-ը, «Лучъ», «Всем. Иллюстрація», «Родина», և շատ ուրիշներ։—Անհամ, անհոտ պատմական վէպեր, վէպիկներ ռուսական զանազան վալտեր Սկոտների՝ Սալիասի, Պետրովի, Սոկոլովի, Պոլէվոի, Ս. Սոլովէովի և ուրիշների գրուածներ, որտեղ չէք գտնի ոչ պատմական ճշդութիւն, ոչ գեղարուեստական նկարներ անցած գնացած ժամանակների, մի խօսքով—պատմական անեկդոտներ և ոչ բոմաններ։ Ահա ովքեր են պատկերազարդ թերթերի նիւթ մատակարարողները։ Զարմանալի չէ ուրեմն, որ դրանք մի կողմից մտնելով ժողովրդի ստորին խաւերը, միւս կողմից արժանանում են հասկացող կարդացողների կողմից կատարեալ արհամարհանքի։ Եթէ մնացել է մի թերթ, որը կարելի է ձեռք վերցնել կարդալու, դա «Живописное Обозрѣніе»-է, այն էլ չնորհիւ այն բանի, որ գործի գլուխը անցել է Միխայլովի պէս մի գրող։ Բայց կար ժամանակ երբ այդ թերթերը կամ դրանց նախորդները կարելի էր կարդալ, երբ նոյն իսկ նշանաւոր ռուս գրողներ մասնակցում էին նրանց մէջ. ապացոյցի համար թերթեցէք նախկին «Пчела»-ն (Պետերբուրգի և ոչ Օդէսայի), «Живописное Обозрѣніе» կամ նոյն իսկ «Нива»-ն։ Հետաքրքրական է, թէ ինչ է պատճառը։ Չը հերքելով միւս քիչ թէ շատ նշանաւոր պատճառները, որոնք ընդհանուր են այժմեան ամբողջ գրականութեան համար, մենք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում ենք մէկ չարիքի վրա։ Օրից օր երբ բազմանում էր պատկերազարդ հրատարակութիւնների թիւը, նրանց հրատարակող վաճառականները, որոնց սիրտը ի հարկէ չէ ցաւում ռուս գրականութեան համար, զանազան վալտեր, Մարկսեր, Օկրէյցներ, սկսեցին իրանց գլխի ճարը տեսնել, և տեսան.... Մոցրին ռուս մամուլի մէջ մի տգեղ, ճիշդ ամերիկական միջոց, այն է ձրի պրէմիաներով չլացնել բաժանորդներին։ Եւ դրանք հասան իրանց նպատակին. ում պրէմիան լաւ է, նրան էլ շատ են գրվում։ Այդպիսով թերթի գրական մասը մնաց անուշադիր և ճաշակ փչացած ընթերցողները սկսեցին այդ տեսակ թերթերի բաժանորդների մեծամասնութիւնը կազմել։ Իսկ միւս կողմից հրատարակիչները միջոց չունենալով կամ չը կամենալով վարձատրել յայտնի հեղինակներին, ստիպված հրաւիրեցին զանազան Օկրէյցներին, Պոլէվոյներին.... Դրա հետևանքն այն եղաւ, որ այժմ ռուսաց պատկերազարդ հրատարակութիւնների մէջ ընդհանրապէս գրական մասը շատ ընկած է, և նրանք միմեանց հետ սկսել են մրցել պրէմիաներով։ Իսկ այդ սովորութիւնը տարել է և միշտ կը տանի պատկերազարդ հրատարակութիւնները դէպի անկում։»

—

Պարսկաստանի Սալմաստ գաւառից մեզ գրում են. «Սալմաստը բաղկացած է 50—60 գիւղերից, հայ, ասորի, հրէայ և պարսիկ բնակիչներով, որոնցից 10 գիւղերում բնակվում են զուտ հայեր կամ խառն միւս ազգերի հետ և տարածված են ամբողջ Սալմաստում։ Այդ գիւղերում բնակվում են հազիւ 3000 բնակիչ հայեր։ Դրանց նշանաւոր մասը թափառում է օտարութեան մէջ. մի աննչան մասն է, որ իրանց հայրենիքում պարապվում են երկրագործութեամբ, կայ մի մաս էլ, որը իր վրա վաճառական անուն է կրում, պարապելով առևտրով Ռուսաստանի և Պարսկաստանի շատ քաղաքներում։ Ժողովրդի մէջ գրագիտութիւն չէ տարածված։ Ժողովրդի նեղ դրութիւնից օգուտ քաղելով ահա չորրիկա, որը կարճ ժամանակամիջոցում աներևակայելի կերպով հարստացել է և մնացած քաղաքակիրթ աշխարհի ահագին գումարները դիզելով, կլանելով՝ իր անսպասելի աջող մրցութեամբ վտանգ է սպառնում այդ վերջիններին....

Հարաւային Ամերիկայի երկիրների բաժիններից ոչ հեռու գտնվում է «Մանկական պալատը» մանկական առարկաների հարուստ ցուցահանդիսով և մանկական թատրոնը։ Ապա անցնում էք «Միջազգային թատրոնի» շինութեան առջև, որը դեռ ևս աւարտված չէ, և որտեղ դիտաւորութիւն կայ աշխարհի ամեն լեզուներով ներկայացումներ տալ։ Մանկական թատրոնի կողքին գտնվում է մի շատ հետաքրքիր պավիլիոն, այն է Եապօնական պավիլիոնը։ Վճարելով մի ֆրանկ մուտքի համար, դուք միջոց ունէք այդ պավիլիոնում ծանօթանալ Եապոնիայի ներքին ընտանեկան և հասարակական կեանքի հետ, եապոնացիների հագուստի, սովորութիւնների, տիպերի, մինչև անգամ բարք ու վարքի հետ։ Պավիլիոնի դրան առջև նստած են երկու գեղեցկադէմ եապոնուհիք, իրանց ազգային չորերով և մեծ աշխատասիրութեամբ փայտից նուրբ առարկաներ են պատրաստում։ Մտնում էք դահլիճը և ձեր աչքերին բացվում է եապոնական ամբողջ քաղաքը.... Եապոնական ճաշակով կառուցված բազմաթիւ տնակների երկու շարքը, որոնց մի պատը բաց է, կազմում են եապոնական մի քաղաքի փողոցը. բնական մեծութեամբ տնակների մէջ՝ նստած, կանգնած, պառկած են բնական մեծութեամբ փայտից շինված եապոնացիք, իրանց ցեղական տիպով և ազգային հագուստներով։ Մի տեղ դուք տեսնում էք եապոնական մի խանութ, ուրիշ տեղ եապոնական տարական դպրոց, ապա եապոնական հարսանիքի հանդէսը, այստեղ եապոնական ոստիկանը տանում է յանցաւորին դէպի բանտը, այնտեղ ամբողջ եապոնական ընտանիքը ճաշի է նստած, մի այլ տան մէջ եապոնական տիկինների մի խումբ նստած՝ կաֆէ են խմում և Նարդիի պէս մի խաղ են խաղում։ Ահա եապոնական մի հաստ վաճառական բազմած է իր խանութում ամոռի վրա, իսկ նրա գործակատարները ծալապատիկ խանութի գետնի վրա են նստած, ահա և եապոնական արհեստաւորի, փայտագործի, նկարչի, հիւսնի արհեստանոցները.... Ահա վերջապէս և փողոցի մի տեսարան. բնական մեծութեամբ մի ձի հեծած եապոնական նշանաւոր մարդը անցնում է փողոցով, նրան առաջնորդում են և ուղեկցում են ծառաներ, աղայի գլուխը արեգակի դէմ հովանիներով պաշտպանելով, իսկ ամբոխը չքաղում է նրա առջև.... Այնտեղ կանգնած է մի մուրացկան, որը անցողներից ողորմութիւն է խնդրում, իսկ այստեղ երկու զարդարված, զուգված տիկիններ հպարտ կերպով անցնում են կառքով, որը քաշում են երկու մշակներ, և այլն։ Նոյն պավիլիոնի վերին յարկում երեկոները եապոնական ներկայացումներ և կոնցերտներ են լինում։

Դուրս գալով եապոնական պավիլիոնից, ձեր աչքին ընկնում է մի շատ բարձր շինութիւն. դա իր մէջ պարունակում է ուշադրութեան արժանի ահագին երկրագունտը, որը շինված է Վիլար և Կոտար երկրագէտների ձեռքով։ Մուտքը մի ֆրանկ. անմիջապէս ձեզ նստեցնում են մի ascenseur-ի մէջ (համբարձող մեքենայ) և դուք աննկատելի կերպով, քանի մի վայրկեանում, հասնում էք շինութեան ամենաբարձր յարկին։ Դուրս էք գալիս համբարձող մեքենայի վագոնից և ձեր աչքերի առաջ բացվում է հետևեալ տեսարանը. մինչև այսօր ոչ մի տեղ չեղած մեծութեամբ մի երկրագունտ (գլոբուս), որը երկաթից է շինված և ծածկված է կարտոնով, հանդստանում է մի պինդ պատուանդանի վրա և ահագին շինութեան յատակից հասնում է մինչև նոյն շինութեան ապակիով ծածկված առաստաղը։ Գլոբուսի վրայով անցնում է կամարաձև մի բալկոն, իսկ երկրագունտի չորս կողմն անցնում է վերևից մինչև ներքև մի լայն սպիրալաձև պատշգամբ։ Մինչև վերև դուք մի քանի վայրկեանում համբարձող մեքենայով էք հասնում, իսկ այդտեղից անդադար պտտվելով հակայ գլոբուսի չորս կողմը, դուք փոքր առ փոքր, քառորդ ժամում, ոտով էք իջնում սպիրալաձև բալկոնով։ Գլոբուսի մեծութիւնն է՝ ճիշդ մի միլիոնական մասը մեր երկրագնտի։ Գլոբուսի մի մէտրը հաւասար է երկրագնտի 1000 վերստին։ Եւ դարձեալ նա այնքան մեծ է, որ մինչև նրա գագաթը պէտք է բարձրանալ ascenseur-ով, իսկ իջնելով պէտք է նրա շուրջը մի քառորդ ժամ պտտել սպիրալաձև բալկոններով։

Գլոբուսի վրա մանրամասն կերպով նշանակված են երկիրներ, և նրանց վրա քաղաքներ, սարեր, գետեր։ Աւելի մոյգ կամ աւելի բաց գոյներով նշանակված է ծովերի աւելի կամ պակաս խորութեան չափը։ Մինչև անգամ երկաթուղիներ, հանքեր են նշանակված.... Սպիրալաձև բալկոնների պատերի վրա կախված են նկարներ, բացատրութիւններ, աղիւսակներ։ Այդտեղ կը գտնէք թւանշաններ՝ երկիրների տարածութեան և ազգաբնակութեան թւի մասին, երկրագնտի ամենամեծ սարերի բարձրութեան ցուցակը և այլն....

Բայց արդէն յոգնեցի մի քանի ժամ շարունակ մանգալուց։ Պէտք է հանգստանալ.... Բայց ինչ կայ աւելի հանգստացնող քան երաժշտութիւնը...

Ահա մի պավիլիոն, որի վրա գրված է թէ ցերեկով 50 սանտիմ մուտքի գին վճարելով, իսկ երեկոյեան 1 ֆրանկ, կարելի է տելեֆոնի միջոցով լսել Պարիզի բոլոր թատրոնների երաժշտութիւնը և երգը՝ ներկայացումների ժամանակ։ Ժամը երկուսն անց է. մտնում եմ պավիլիոն, վճարում եմ 50 սանտիմ և հարցնում եմ թէ ինչ բան կարող եմ լսել։ Մի պարոն պատասխանում է լինած թէ «Folies Parisiénnes» թատրոնում ցերեկվայ ներկայացումը սկսվել է, ուրեմն կարող եմ լսել յիշեալ թատրոնի օրկէստրը և երգիչների երգը։ Մտնելով դահլիճը, գտնում եմ այնտեղ արդէն բաւական մեծ հասարակութիւն երկու սեռի. բոլորն էլ կանգնած դահլիճի պատերի երկայնութեամբ, երեսները դարձած դէպի պատը, թելեֆոնի երկու ծայրերը ականջներին մօտեցրած՝ ուշադրութեամբ լսում են։ Ես էլ հետևում եմ նրանց օրինակին....

Հազիւ մօտեցրի երկու ականջներիս թելեֆոնի երկու ծայրերը, և ահա հնչեց իմ ականջներին, կարծես թէ նոյն սրահում լինէր, մի ամբողջ և ներդաշնակ օրկէստր. ոչ թէ միայն օրկէստրի ամբողջութիւնը, բայց և ջութակի և ֆլէյտի ամենանուրբ ձայները որոշ և գեղեցիկ կերպով լսվում են.... Մի տղամարդ սկսում է կուպլէտներ երգել, ապա մի կին,—ձայնի պիանիսիմօ անգամ որոշ կերպով լսվում է....

Գնում եմ տուն ճաշելու և թղթակցութիւն սկսելու և վճռում եմ երեկոյեան 8 ժամին անպատճառ կրկին վերադառնալ Մարսեան դաշտը Էդիսոնի սիստեմայով այդ կատարելագործված թելեֆոնի օգնութեամբ՝ Պարիզի Մեծ-Օպէրայի երգը լսելու համար։

Եւ ճշմարիտ գալիս եմ երեկոյեան։ Չը մոռանանք որ Պարիզի պլանի համեմատ Մեծ-Օպէրայի շինութեան և Մարսեան դաշտի մէջ ուղիղ գծով 3 վերստ տարածութիւն կայ, բայց Մարսեան դաշտի վրա կառուցված պավիլիոնում, մօտեցնելով ձեր երկու ականջներին Մեծ-Օպէրայի շինութեան հետ կապված թելեֆոնի երկու ծայրերը, դուք էլէկտրականութեան միջոցով լսում էք օպէրայի ներկայացման ժամանակ օրկեստրի և մարդկային երգի բոլոր ելևէջները.... Ահա սկսեց երգել մի տիկին. որքան հրաշալի և քնքոյշ է նրա ձայնը, որքան մեղմ է նրա պիանիսիմօ, որքան ոյժ ունի նրա ֆորտէ.... Նա վերջացրեց երգել,—և ահա թելեֆոնի միջոցով ես որոշ կերպով լսում եմ թէ 3 վերստ հեռու գտնվող թատրոնի դահլիճը ինչպէս դղրդում է ծափահարութիւններով....

Չեմ յիշում իր պիէսաներից որի մէջ մեր տաղանդաւոր դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանց ունի մի տիպ, որը իր ամբողջ կեանքը «դիփ աւետարանիցն է խօսում։» Կարծեմ ես էլ, Թիֆլիս վերադառնալով, մի ամբողջ տան տարի շարունակ առատ նիւթ կունենամ մի գլուխ «Պարիզի ցուցահանդիսի հրաշալիքներից» խօսելու....

Գրիգոր Արծրունի

բորդ տարին է, որ նոյն իսկ զուտ հայերից բաղկացած գիւղերում բողոքականները հիմնել են ուսումնարան և դրաւում են հայ երեխաներին դէպի իրանց դպրոցները ձրիապէս ուսանելու։ Բողոքական միսիոնարները մեծ գործ չինելով Պարսկաստանի խորքերում, պէտք է ասել, չեն էլ համոզված, որ իրանք մի առանձին ոյժ և մեծ միջոցներ ունեն. մի բան միայն նրանք գիտեն,—այն է, որ իրանց այդպիսի գործունէութեան ասպարիզում ոչ մի հակառակորդ, ոչ մի դիմադրող չեն տեսել և չեն էլ տեսնում։»

—

Մեզ հաղորդում են, որ Մոսկվայի էտնոգրաֆիական ընկերութիւնը որոշել է Անդրկովկաս ուղարկել աղգագրական նիւթեր հաւաքելու համար պ. Գ. Խալաթեանցին։

—

Յուլիսի սկիզբներից սկսած Թիֆլիսում արտասովոր շոք է անում, մի այնպիսի շոք, որը գուցէ աւելի սաղական լինէր Պարսկաստանի հարաւային կողմերում և Աֆրիկայում, քան թէ զեղեցիկ կլիմայով հռչակված Կովկասում։ Բարեբաղդաբար վերջին օրերում, գիշերները եկած անձրևները մի փոքր մեղմացնելով օդը՝ ազատեցին բնակիչներին թոյլ կուլ տալու և կեղտոտ փողոցների դարշահոտութիւնը զգալու դժբաղդութիւնից...

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ կազմված յատուկ յանձնաժողովները այժմ վերանայում են ծխախոտային, շաքարի և իմիչքների կանոնադրութիւնները։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Յունիսի 29-ին Սահակ-Մեսրոպի տարեդարձը կատարվեցաւ Պոլսի բոլոր եկեղեցիների և դպրոցների մէջ արտաքոյ կարգի ոգևորութեամբ. նոյն օրը կատարվեց նաև Իզմիրեան կամակի մրցանակաբաշխութիւնը, որը տեղի ունեցաւ շատ հանդիսաւոր կերպով։ Երիտասարդների մի խումբ պատրաստված էր յուլիսի 2-ի կիրակի օրը, դաշտային հանդէս կատարել Բոսֆորի մէջ ի յիշատակ Ս. Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ։ Այս ժեռը միասին շատ մեծ տպաւորութիւն առաջ բերեցին։ Ոստիկանութիւնը Պատրիարքարանի միջոցով արգիլել տուեց դաշտային-ծովային հանդէսը։ Սիմոն-պէյ արքունի պալատ հրաւիրվեցաւ, որից և բացատրութիւններ պահանջեցին այդ հանդէսների և ցոյցերի համար։»

—

Յուլիսի 4-ից Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են. «Երգիչ Շահլամեան թէպէտ պիտի մեկնէր Պոլսէն մի շաբաթ առաջ, բայց Հայրիկ խնդրեց որ մի շաբաթ ևս կենալով ներկայ գտնուի փոքրիկ եկեղեցիի մը ծօնին։ Այդ փոքրիկ եկեղեցիին քարոզիչն է Հայրիկ. Վոսիորի ասիական եղբը Գուզկունճուքի թաղի եկեղեցին է այդ. պ. Շահլամեան չէր կարող մերժել Հայրիկի առաջարկը և կատարեց։ Այսօր յուլիսի 4-ին կը մեկնի Պոլսէն. կը գնայ Իզմիր, ուր թերևս մնայ մի քանի օր։ Անտի կանցնի Նափոլի։»

—

ԱԽԱԼՑԻԽԱՑԻՑ մեզ գրում են. «Մեծ աղմուկով և իրարանցումով կատարած քաղաքային ինքնավարութեան ձայնաւորների ընտրութիւնները քանդվեցին՝ տեղի ունեցած մի քանի անկանոնութիւնների պատճառով։ Լինելու է վերընտրութիւն։ Այդ հակասական է։ Քանի նեղ կուսակցական կրքերը և անձնական հաշիները ղեկավարեն մեզ, մեր ամեն հասարակական գործերը ՝պիտի այլանդակվեն։ Զը կայ մեր մէջ սկզբունքի կուսակցութիւն, չը կայ անաչառ համոզմունքի միութիւն, չը կայ հաներաշխութիւն. այդ մինի սիրածը՝ նախանձի ատելութիւնից ղրղված դաւադրութեամբ գլորելու ձգտում, միւսի յարգածը ստոր ղրպարտութիւններով անարգելու ջանք։ Եւ այդ տեսակ հանգամանքներն այն աստիճան զզուեցնում են բարեխիղճ գործողներին, որ նրանք ուխտում են բոլորովին հեռու և չէզոք մնալ հասարակական գործերից։ Մենք ունենք քաղաքային ինքնավարութիւն. դա պարծանք է Ախալցխայի համար. ինչու չը գնահատել այդ արտօնութիւնը. ձեռք տանք միմեանց, ընտրենք արդար համոզմունքով տոկուն, գործունեայ, անաչառ ձայնաւորներ, որոնք խելացիութեամբ առաջնորդեն և ղեկավարեն քաղաքային գործերը։ Միթէ նախատինք չէ հասարակութեանը, որ 12 տարի ինքնավարութիւն ունենալուց յետոյ յանդգնում է ձեռք բարձրացնել ինքնավարութեան վրա և ցանկանում է ոչնչացնել։ Այդպիսի մի ձգտում ունեցող խնդիր ներկայացված էր մի երկու ամիս առաջ իշխան կառավարչապետին, որպիսին անչուշտ մնալու է առանց հետեանքի։ Եթէ թոյլ և անընդունակ են վարչութեան ներկայացուցիչները, ընտրեցէք ընդունակներին, աւելի արժանաւորներին, բայց մի՛ք համարձակվի սրբապղծելու տարիներով արտօնված մեր քաղաքացիական իրաւունքները։ Փոխանակ քունջ ու պուճախներում բամբասել այս և այն գործիչներին, հրապարակ դուրս եկէք, բողոքեցէք և պաշտպանեցէք իրաւունքներդ, և ոչ թէ ՀՀուից վրէժ առնելու համար, ամբողջ գորգը կրակին զոհաբերէք»։ Ցաւանք, որ այս անգամվայ փորձը կը խրատէ մեր քաղաքացիներին, ներշնչելով նրանց աւելի անկողմնապահութիւն և աղնուութիւն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԻՍՏՐԻԱՑԻՑ

—

Վիէննա, յունիսի 15-ին

Դէպի Պարիզ ուղևորվելով՝ ես անցայ Վիէննայի վրայով, և այժմ, անցնելով 5—6 երկիր, գտնվում եմ Վիէննայում, որտեղ և գրում եմ այս տողերը։ Կովկասից Պարիզ ուղևորվելիս, ես անցայ Թիւրքիայով. մտայ նախ Բոլգարիա, Սերբիա, յետոյ Ունգարիա և Աւստրիա. իմ ստացած ճանապարհորդական տպաւորութիւնները ես շատ համառօտ կերպով կամենում եմ հաղորդել «Մշակի» ընթերցողներին։

Թիֆլիսից ես ընկերացայ բժիշկ Բ. Նաւասարդեանի և Էջմիածնի ճեմարանի ուսուցիչ Ցովհաննիսեանի հետ, որոնք նոյնպէս գնում էին Պարիզի աշխարհահանդէսը։ Բաթումից մենք նստեցինք Պակէի «Մինգրելիա» շոգենաւը, մինչև Կ. Պոլիս։ Երբ մենք մօտեցանք Տրապիզոնին, անհամար մակոյկներ չրջապատեցին մեր նաւը, մակոյկավարները խառնիճաղանճ կերպով սկսեցին մրցել միմեանց հետ, ցանկացողներին ափը դուրս բերելու համար։ Ես նաւից չը դուրս եկայ, վաղօրօք զզված լինելով տաճիկներից և նրանց մակոյկներից, այլ շոգենաւի նորմի վրա յենված ես դիտում էի նրանց. մի տաճիկ, ըստ երևոյթին աւազանիներից մէկը, ցանկանում էր մակոյկ նստել։ Մակոյկավարներից մէկը բղաւեց պարոնին ասելով.

—Էֆէնդի, իմ մակոյկս համեցէք. նրանը մուռատաս է, նրա վրա օրը տասը «գնավուր» է նըստում։

Միւսը պատասխանեց աւելի ևս պատաւաւոր խօսքերով։ Ես հասկացայ նրանց խօսքերը ում մասին էին և զզվելով հեռացայ։

Մի ժամից յետոյ քաղաքից շատ հայեր եկան մեր նաւը, որը սրան-նրան ճանապարհ գցելու, որը վաճառականական գործով, մի քանիսն էլ լոկ իբրև սիրողներ։ Դրանց մէջ ամենից շատ իմ հետաքրքրութիւնս գրաւեց մի պատկառելի դէմքով և անսովոր գեղեցիկ քիթով և գեղեցիկ եւրոպական հագուստով մարդ։ Այդ պարոնի դէմքը մի տեսակ մուդէական տպաւորութիւն էր անում նայողի վրա։ Նրա քիթը չինծու էր և որքան գեղեցիկ էր չինված, այնքան գեղեցիկ չէր դրած իր տեղում, այնպէս որ մի 6—7 քայլից արդէն երևում էր պղնձէ ինչ որ թել, որով երևի ամրացվում էր քիթը դէմքի վրա. պարոնի նախկին քիթը գուցէ այնքան հմտակրելի չէր եղած, որքան այդ արհեստականը, որ միանգամայն մարդու ուշքը գրաւում էր դէպի ինքը։ Եւ ճշմարիտ, եթէ օպերացիան մարդու ցաւ չը պատճառէր, գուցէ վատ չէր լինի, եթէ ամեն մի անճոռնի քիթի տէր մարդ մի այդպիսի արհեստական գեղեցիկ քիթ դնել տար։ Ասում են Պարիզում այնքան այդ արուեստը զարգացած է, որ արհեստական քիթը, աչքը, ատամը բնականից որոշել դժուար է լինում։

Տրապիզոնում մենք երկար կանգ չառանք և ուղևորվեցինք դէպի Սամսոն։ Սամսօնը նոյնն է, ինչ որ Տրապիզոնը. փողոցները նեղ-նեղ, ցեխոտ, և ամենապատկառելի տաճիկ էֆէնդին էշով է մանգալիս փողոցում։ Ծովափնեայ մի քանի քաղաքներում, ինչպէս մենք պատահեցինք Բաթումից մինչև Պոլիս, առաջացել են դեռ ևս մեզ անյայտ և նոր տեսակի հարստահարողների խմբակներ։ Այդ խմբերը գլխաւորապէս բաղկացած են տաճիկներից և մասամբ հայերից, որոնք գՀլում են հայ գիւղացու վերջին փարաները։ Վերջինները աւելի մեղմ են քան առաջինները։ Ցայտնի է, թէ տարեկան քանի հազար մարդիկ են գնում Մեքքա ուխտի։ Անդրկասպեան երկաթուղու բացվելը նպաստել է այդ գործի հեշտացման և ահա ռուսաց նոր նուաճած երկրներից անհամար ուխտաւորներ թափվում են Բաթումի ծովափը, Սև ծովով ճանապարհորդելու համար։ Բաթում հասնելուն պէս այդ խեղճերին չրջապատում են այդ նոր տեսակի հարստահարիչները և առաջարկում են իրանց ծառայութիւնը նրանց համար տոմսակ և այլ ամեն տեսակ պիտոյքներ հոգալու համար։ Անփորձ ճանապարհորդները գնում են իրանց փողերը այդ նենգաւորների կարգադրութեան տակ և իրանք անհոգ նստում իրանց տեղը։ Եւ ահա, դիցուք դուք գնում էք Պոլիս և մինչև Պոլիս արժէ 20 ր., հարստահարիչ ջերմեռանդ մահմէտականը բերում է ձեզ մի տոմսակ մինչև Տրապիզոն, դուք չնորհակալ լինելով նուիրում էք նրան մի բան և ճանապարհ ընկնում դէպի Պոլիս, բայց առաջ Տրապիզոնում կամ Սամսօնում ձեզ ցած են իջեցնում նաւից և դուք ստիպված էք նոր տոմսակ վերցնել մինչև Պոլիս։ Նոյնն են անում և վերադարձի ժամանակ։

Մի ահագին մակոյկ, խայտաճամուկ ամբոխով, ինչպէս ասում են, մինչև բերան լի, մօտենում էր մեր նաւին, երբ մենք Սամսոնի մօտ էինք։ Սկզբում մենք կարծում էինք թէ սրանք ասորի են, յոյն են, Թիւրք, վերջապէս խառն զանազան ազգերից, բայց յետոյ, ցաւալի է ասել, յայտնվեց, որ դրանք բոլորը Հայաստանի զանազան գաւառներից հաւաքված մշակներ են, որոնք գնում են Պոլիս «օրեկան պարէն» աշխատելու։ Խեղճերը չը գիտէին գործ ճարելու են, թէ ոչ. ինչպէս պատմեցին, օրեկան միայն Սամսոնից 25—30 մարդ նաւ է նստում գնալու։ Ահա այդպէս է դատարկվում Հայաստանը։

Սամսօնում մեր նաւի վրա ծանօթացայ դերասանուհի տ. Պայծառ Ֆասուլաճեանի հետ։ Նրանից իմացայ, որ եկած է եղել Սամսոն թիւրքաց թատրոն չինել տալու համար. այդ գործը գլուխ բերելուց յետոյ, նա գնում էր Պոլիս, որ այնտեղ դերասանական խումբ կազմի Սամսոն տանելու համար։ Պոլիս նոյնպէս հայերէն ներկայացումներ չեն լինում և հայերը գլխաւորապէս սիրով յաճախում են թիւրքաց ներկայացումները։

Ցունիսի 12-ին հասանք Պոլիս։ Ամբողջ մի ժամ մենք անցնում էինք գեղեցիկ և հրաշալի Բոսֆորով. արդարև արտաքին տեսարանը հրապուրիչ և դիմիչ է, մարդ չը գիտէ որ կողմ նայէ՝ մառավալապատ Պոլսին, թէ վաղորդեան արեգակի լոյսի տակ ծիծաղող Բոսֆորի անհուն տարածութեան։ Ահա մի ամրոց, խիտ ծառերի և շատրուանի մէջ վերմակված, ահա մի հարեմ, ուր թուլամորթ տաճիկը, նրա իշխանը հաղիւ զարթել է գիշերային երջանիկ քնից, ծանրացած կոպերը չեն հնազանդվում տիրոջ, նա չէ կարողանում զարթնել, գլուխը ծանրանում է և նա նորից թուլացած ընկնում է գեղեցիկ հարեմուհու կռների վրա.... Վաղուց, դեռ արևը չը ծագած, մուեզզին-բաշին պատել է սրածայր, բարձրը ու սպիտակ մինարէթի գագաթում, առաւօտեան նամազի հրաւիրելով ուղղափառ տաճիկներին։ Աւաղ, մեր հիացումը երկար չը տևեց, և չատով վրա հասաւ հիասթափման րոպէն։ Այստեղ նոյնպէս ճանճերի նման չրջապատեցին մեզ մակոյկները։ Մենք վարձեցինք նրանցից մէկը, հռչակաւոր Ոսկեղջիւրի ափը իջնելու համար։ Հաղիւ մի անգամ թիավարել էինք նաւից հեռու, երբ արագութեամբ մեզ մօտեցաւ մի մակոյկ։ Երեք կարմրաթէս և սև, գեղին ու կապոյտ դոյնի դէմքերով մարդիկ նստած էին այդ մակոյկի մէջ. սրանցից դեղնակաշին թիավարն էր, կապտակաշին մաքսատան պաշտօնեայ, իսկ սեւամորթ էֆէնդին նրա օգնականը։ Սև էֆէնդին կապկի արագութեամբ թռաւ մեր նաւակը և սկսեց փնտռել մեր գրպանները, ծոցերը, գտակը և այլն։ Ընթերցողին եմ թողնում, թէ ինչ տպաւորութիւն կը թողնէր մի փոքր ի շատէ կըրթված մարդու վրա այդ քաղաքավարի հետախուզութիւնը, որը մենք դժբաղդութիւն ունեցանք տանելու մեր այն մեղքի համար, որ ճարպիկութիւն չունեցանք վաղօրօք նրա առաջ մի երկու զրուշ չպրտելու.... Այստեղից սկսվեց մեր հիասթափումը Պոլսի վերաբերմամբ և շարունակվեց մինչև երեկոյեան 8 ժամը։

Պոլիս հասնելով առաջին գործերս այն եղաւ, որ չատպեցինք մտնել «Արևելքի» խմբագրատուն, որտեղ կամենում էինք տեսնվել «Մշակի» մշակներից մի քանի հոգու հետ։ Մենք վարձեցինք մի կառք, որ մեզ տարաւ Գալատիայի կամուրջի մօտ գտնվող Ֆրանկ թաղակից պ. Հայկակի հետ։ Մենք մտնելով Պոլիս երկրորդ անգամ ընդհարվեցինք տաճիկ պաշտօնեաների հետ, որոնց անքաղաքավարութիւնը, ի դէպ ասել, և մաղաչափ անգամ դէպի օտարահպատակը պատկառանք չը տածելը, բոլորովին սահման չունեն։ Զորս հինգ արկղներ, որոնց մէջ զետեղված էին մեր հագուստները պէտք է ենթարկվէին խուզարկութեան. մի ցեխոտ փողոցում, կեղտոտ մթնոլորտում բաց երկնքի և այրող արևի տակ, մաքսատան մի նոր պաշտօնեայ, հիւանդի նման տատանվելով մօտեցաւ մեր մակոյկին մեզ ասելով.

—Բէջ մեջիդիէ վերերսընզ նէ, աչմարամ։—Այսինքն եթէ հինգ մէջիդիէ կը տաք՝ չեմ բանայ ձեր արկղները։ Խօսքը կաշառքի մասին էր, և այդ այնքան բացարձակ և յանդուգն, որ մենք մի բոլէ ապշած մնացինք։ Սակարկութիւնը կատարվում էր մօտ 10—12 մարդկանց ներկայութեամբ։ Ո՞վ կը ցանկանար մի քանի կօպէկի համար, իր չարչարանքով կապոտած իրեղէնները փողոցի մէջ ցրված տեսնել։ Սակարկեցինք և վերջը 2 մէջիդիէով բանը գլուխ բերինք։ Մեր կողմից այդ էլ մեծ քաջութիւն էր, որ 5 մէջիդիէից, 2 մէջիդիէի վրա կանգնեցրինք։

Մօտ 10 ժամ թափառեցինք Պոլսի կեղտոտ փողոցները։ Փողոցները նեղ նեղ, ծուռ և ցեխոտ. չներ, չներ, և չներ. ամեն քայլում մի չուն, ամեն կրպակի մօտ երկուսը, երեքը և շատ անգամ հինգը, որոնցից երկուսը քնած, երեքը մտածութիւնների մէջ են։ Պոլսի չները արդէն աշխարհին յայտնի են։ Ասում են եւրոպացիք տաճիկ կառավարութեան առաջարկել են մօտ 300 հազար բուբլի այդ չները ոչնչացնելու համար, բայց կառավարութիւնը մերժել է այդ առաջարկութիւնը, որովհետև Շեյխուլ-իսլամը մեղք է համարում չներին կոտորելը։

Եթէ, իրօք 300 հազար բուբլի են տալիս Պոլսի չները գնելու համար, ապա 50 կօպէկ մէկը հաշուելով, կարելի է երևակայել թէ որքան չներ կան հռչակաւոր Պոլսում։ Շները Պոլսում մեծ ազատութիւն են վայելում, և մեծ արտօնութիւններ ունեն, որ գուցէ հպատակներից շատերը նրանց նախանձում են. բացի տնային չներից փողոցային չների թիւը մօտ 500 հազար կարելի է համարել. սրանք կերակրվում են հասարակաց հաշուով. ծնում են փողոցներում, ապրում են իրանց լակոտների հետ փողոցներում, և այնքան հաւատ ունեն իրանց իրաւունքների մասին, որ կառք չը բանող փողոցների վրա նրանց կը տեսնէք շարքով, ուղիղ փողոցի մէջտեղում քնոտած։ Եւ այդ կոչվում է մայրաքաղաք։ Ձիաքաշները կեղտոտ, ծառայողները կամայական և ղզուելի, կրպակատէրերը լկտի և բերանները վատ յիշողներով լի։

Մենք գնացինք Այա-Սոֆիայի տաճարը տեսնելու, բայց մեզանից պահանջեցին, ամեն մէկից մէկ և կէս բուբլի։ Ապա գնացինք «Կենտրոնական վարժարան», ուր տեսուչ պ. Զերազի հետ ծանօթանալով՝ սիրալիր ընդունելութիւն գտանք։ Ուսումնարանը շատ լաւ դրութեան մէջ է, ուսումնապատկան իրեղէնները կարգին. հանգուցեալ Ներսէս պատրիարքը իր բաւական հարուստ, մօտ 900 գրքից բաղկացած գրատունը նուիրել է այդ ուսումնարանին։ Այդ գրքերի մէջ հետաքրքիր էր տեսնել և «ղորանը»։ «Արևելքի» խմբագրատանը հիւրասիրեցին մեզ մի մի «փընջան ղայֆով»։ Մեր Պոլիս մտնելու օրը «Արևելքի» դուրս եկած համարում տպած էր մի լուր, որ հաղորդում էր մեր Պոլիս մտնելու մասին. այդ լուրի մէջ, ի միջի այլոց գրած էր և նուաստիս համար. ի հարկէ, այդ շատ մեծ պատիւ է, որ մեր պօլսեցի եղբայրները յաճախ անում են իրանց «ուսուցչաց թանգագին հիւրերին». բայց գոնէ տեղեկութիւնները ստոյգ լինէին։ Օրինակ իմ մասին գրած էր՝ «Բագուի մէջ մեքենագործարանի կառավարիչ».... որը լինելու մեծ հմտութիւնը դեռ չունեմ ես.... «Արևելքի» ոյժերը բոլորը երիտասարդներ են և եռանդոտ. Աստուած տար, որ ազնուութեամբ և քաջութեամբ առաջ տանէին ստանձնած սուրբ գործը....

Հօմ լինել և պապին չը տեսնել, շատ զարմանալի կը լինէր։ Պոլիս լինել և Հայրիկին չը տեսնել շատ ցաւալի կը լինէր, բայց մեզ վիճակված էր նրան տեսնելու բաղդից զրկվել։ Հայրիկը դարձել էր մի կտոր շաքար և անյայտացել. էլ արուարձան չը մնաց, որ մարդ չուզարկէինք, բայց և այնպէս մեր բոլոր աշխատութիւնները իզուր անցան, մենք չը տեսանք սիրելի Հայրիկին։ Այցելեցինք

պատրիարքին, բայց նրան էլ չը տեսանք, փոխանորդ հայրը ընդունեց մեզ սիրալիր կերպով։ Տեսանք Օրմանեան սրբազանին, որը ամենայն կերպով այժմ զբաղված է Արմաշում ճեմարան հիմնելու մտքով։

Հռչակաւոր Պոլսում մի յիշատակի արժանի բան ևս տեսանք։ Մեզ առաջնորդեցին դէպի մի բաւական հին շինութիւն, որի դրանը տաճկերէն և հայերէն գրած էր կարծեմ այսպէս. «Եանիչերլերըն սինքսըզի»։ Այդքանը հասկացանք, որ այդ հին եանիչարների արձաններ են։ Վճարեցինք և մտանք։ Ինչ տեսարան էր, Աստուած իմ։ Կոպիտ, մոմէ և փայտէ արձաններ, քիթերը մեծ մեծ և կարդոնից, միրուքները տախտակից և սև ներկած և այդ մօտ 200 արձանները զուրկ գեղարուեստական ճաշակից, միայն կզուանք էին յարուցանում, և մենք զզուած դուրս եկանք, հէնց դռնից իսկ։

Ճաշեցինք մի հայ հիւրանոցում, ուր ներկայ էր մեր յայտնի դերասան պ. Ադամեան. ուրախ, առողջ վերադարձել էր Զմիւռնիայից և բաւական էր այնտեղացիներից։ Այժմ մտադիր է Անգլիա գնալու, իսկ սեպտեմբերին Պարիզ։ Պոլսեցիք անհամբեր սպասում էին պ. Շահլամեանի կոնցէրտին։ Տեսանք երիտասարդ երգչին. սրա մասին մի երկար յօդուած կար «Արևելքում»։

Դուրս գալով Պոլսից երկաթուղով ուղևորվեցանք Բոլգարիա։

Ա. Աբէլեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կրիտէ կղզին ուղարկված Մահմուդ փաշան ներկայացրեց սուլթանին, ինչպէս հեռագրում են Կ. Պոլսից, մի մանրամասն զեկուցում Կրիտէի գործերի մասին։ Թէ ինչ եզրակացութիւն է դուրս բերած այդ զեկուցման մէջ, առ այժմ յայտնի չէ. Մահմուդ փաշան հաստատութիւն չը կարողացաւ կայացնել ապգաբնակութեան հետ, ուստի ենթադրել պէտք է, որ այդ զեկուցումը շատ էլ նպաստաւոր չէ կարող լինել կրիտացիների պահանջների տեսակէտից։

—Սոֆիայից գրում են, որ կառավարութեան մտադրութիւնը՝ Լոնդոնում նոր փոխառութիւն անելու՝ չաջողվեց։

—Վիէննայում լուրեր են տարածված, որ Աթէնքից զէնք և փող է ուղարկվում Կրիտէ կրզին։

—Լոնդոնից կրում են, որ եթէ յիրաւի Թիւրքիան կը մտնենայ, կամ կը մասնակցի երեքպետեան դաշնակցութեան, այն ժամանակ Անգլիան դուրս կը գայ իր չէզոք դիրքից և Եւրոպայի կենտրոնում մի որ և է պատերազմ ծագած դէպքում, նա նոյն իսկ մասնակցութիւն կընդունի։

—Վերջին ժամանակներս Խալանդիայում ձրգտումներ են երևում բաժանվելու Դանիայից և անկախ դիրք բռնելու։

—Վիէննայից հաղորդում են, որ նոր-չեխերի վերջին շարժումները, ինչպէս համոզված են քաղաքական շրջաններում, մի առանձին ներքին շփոթ չեն կարող առաջ բերել։

—Նիկոմիդիայից գրում են Կ. Պոլսի լրագիրներին. «Անցեալ ուրբաթ օր, մինչդեռ մահմէտականքը իրենց սովորական աղօթքները կընէին մզկիթին մէջ, աւազակաց խումբ մը մզկիթը մտեր և կողոպտեր ու խոշտանգեր է տեղւոյն հարուստները»։ «Մոնիդեօռ» լրագիրը լսել է, թէ ոստիկանաց մի զօրաւոր խումբ մայրաքաղաքից Նիկոմիդիա գնացել է։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԼՈՆԴՈՆ, 10 յուլիսի։ Կրիտէ կղզուց հաղորդում են, որ ապստամբները իշխանութեան ներկայացուցիչներին քշեցին Վամօսից և Սիգոնիայից, և այրեցին այնտեղի արխիվները։ Գիւղական ազգաբնակութիւնը՝ սարսափահար եղած՝ քաշվեցաւ դէպի Բէտիմօ։

ՎԻԷՆՆԱ, 10 յուլիսի։ Բոլգարիայում կազմվեցան մի քանի աւազակային խմբեր, որոնց նպատակն է ձերբակալել Կոբուրգեան պրինցին։

ԱԹԷՆՔ, 10 յուլիսի։ Օտար հիւպատոսները գնացին Բուցումարիում հաւաքված կրիտացիների գլխաւորների մօտ, և խոստացան նրանց, որ կաշխատեն յետ կանչել տալ նահանգապետին և կատարել տալ կղզու ազգաբնակութեան գլխաւոր պահանջները։ Դրա հետ միասին հիւպատոսները խորհուրդ տուին, որ ժողովուրդը, ի նկատի ունենալով կղզու շահերը, կարգը չը խանգարէ։ Կրիտացիների գլխաւորները զրան դեռ պատասխան չեն տուել։ Թիւրքիայից Կրիտէ ուղարկվում է նոր զօրք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի։ Երէկ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչի առողջութիւնը մի քիչ լաւացաւ՝ այն է, որ կաթուածահար եղած աջ ոտը սկսեց տեղից շարժել. քնատութիւնը աւելի պակաս է. օգոստափառ հիւանդը արթնանում է ինքնակամ. շրջապատողներին վերաբերվում է գիտակցաբար. գիշերը լաւ անցկացրեց. ջերմութիւնը 36,6. զարկերակը՝ 48 մի րոպէում։ Այսօր պիանիստ Անտոն Ռուբինշտէյնի արտիստական գործունէութեան յիսնամեայ յօբելեանի լրանալու օրն է։ Յօբելեանի տօնելը յետաձգված է մինչև նոյեմբերի 18-ը, այն է մինչև յօբելեարի ծննդեան օրը։ Սիմֆիրսկում վախճանվեց յայտնի բանաստեղծ և թարգմանիչ Դ. Դ. Մինաեվ։

ՊԱՐԻԶ, 11 յուլիսի։ «Republique Française» հաղորդում է, որ բարձրագոյն ատեանը շաբաթ օր կը հրատարակի մի վճիռ՝ Բուլանժէին և նրա ընկերներին իրաւունքներից զրկելու մասին։ Դատից խոյս տուողները կը զրկվեն քաղաքացիական և քաղաքական իրաւունքներից, և այդ պատճառով շաբաթ օրվանից սկսած, Բուլանժէ, Բոշֆոր և Դիլիոն այլ ևս չեն կարող ընտրվել և նրանց գոյքը ձերբակալութեան տակ զրվի։

Կ. ՊՕԼԻՍ, 11 յուլիսի։ Միլան թագաւորը այսօր ուղևորվեց Բելգրադ, ուր կը մնայ մօտ 10 օր։

ԼՕՆԴՈՆ, 11 յուլիսի։ Պարլամենտական յանձնաժողովը Ուէլսի պրինցի ռոճիկը աւելացրեց 36,000 ֆ. ստերլինգով, փոխանակ առանձին գումար նշանակելու նրա որդոց։ Թագուհուն առաջարկված է փող պահանջել իր միւս թոռների համար, բայց թագուհին այդպիսի պահանջից հրաժարվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յուլիսի։ Հրատարակված է պետական խորհրդի որոշումը թագաւորական բանդրօլով թէյ ծախելու մասին։—Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչի առողջութիւնը լաւանում է։ Օգոստափառ հիւանդը կարողացաւ հասկանալի կերպով արտասանել մի քանի խօսքեր. ախորժակը մի փոքր բացվում է. ոյժերը աւելի զօրեղ են։ Նորին Բարձրութիւնը կարողացաւ մի քանի ժամանակ բազկաթոռի վրա նստած մնալ. ընչաւորութիւնը երբեմն-երբեմն կատարելապէս կանոնաւոր է. գիշերը հանգիստ անցկացրեց. տաքութիւնը 37, զարկերակը 48 մի րոպէում։

ՎԻԷՆՆԱ, 12 յուլիսի։ Մեծ Իշխան Պետոր Նիկոլաեվիչ Պետերբուրգ վերադառնալիս՝ այսօր անցաւ Վիէննայով։—Լրագիրների տեղեկութիւնների համեմատ Բիստրիչ կաթուածահար է եղել։

ԼՕՆԴՈՆ, 12 յուլիսի։ Լօրդերի պալատը երրորդ ընթերցումից յետոյ ընդունեց երկրագործական մինիստրութիւն հիմնելու բիլը։—«Ռեյտէրի գործակալութեանը» Սիմլայից հեռագրում են, որ Հնդկաստանի պաշտպանութեան ուրուագիծը կատարելագործելու նպատակով, տեղական պետութիւնները բոլորը միասին տալիս են 30,000 մարդ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 11-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	97 ր.	—	›
Բերլինի վրա 100 մարկ —	47 ›	45	›
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 ›	50	›
Ոսկի — արժէ —	7 ›	76	›
Մաքսային կուպօնները —	151 ›	—	›
Արծաթ — — —	1 ›	13	›
Բօրսային դիսկօնտներ —	5⁷/₈ և 7%		
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	98 ›	75	›
— — — — 2-րդ —	98 ›	75	›
— — — — 3-րդ —	98 ›	62	›
— — — — 4-րդ —	98 ›	62	›
— — — — 5-րդ —	98 ›	75	›
— — — — 6-րդ —	98 ›	87	›
Նոր 4%	83 ›	37	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 ›	12	›
— — 2-րդ —	99 ›	—	›
— — 3-րդ —	98 ›	62	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	263 ›	—	›
— երկրորդ —	435 ›	50	›
5½% բէնտա	103 ›	—	›
Ոսկեայ բէնտա	171 ›	50	›
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	141 ›	50	›
Նոր երկաթուղային բէնտա	98 ›	75	›
5% գրաւակա՛ն թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մոտ.	137 ›	75	›
— — թղթադ.	92 ›	25	›
Գրաւ. թղ. Ազնաւ. բանկի	98 ›	—	›
Գիւղական բանկի	103 ›	—	›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— ›	—	›
— —Ռոստովի-18 և 43տ.	— ›	—	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 ›	50	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 ›	—	›
Օդէսայի — —	94 ›	75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	— ›	—	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը բաւական հանդարտ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ՇՈՒՇԻ Զ. Ձեր քննադատական նկատողութիւնը չի տպագրվի միմիայն այն պատճառով, որ շատ ուշ է։

Ժամանակաւոր խմբագիր Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

կամ

ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶԿԱՆԱՆՑ

Այս գիրքը, որ ֆրանսիական ակադէմիայի անդամ և անուանի հեղինակ Էրնէսթ Լէգուվէի երկասիրութիւններից առաջինն է, թէ Ֆրանսիայի և թէ արևմտեան Եւրոպայի մէջ մեծ հռչակ է հանել։ Բարեյիշատակ հանգուցեալ տիկին Թագուհի Մելիք-Ազարեանցը թարգմանել է սորան հայերէն լեզուով, իսկ նորա ամուսին պ. Ադէքսանդր Մելիք-Ազարեանցի հրատարակութեամբ տպագրուած է այսօր։ Գրքի սկզբում զրված է վաղամեռիկ տիկնոջ որդեկորոյս հօր-Ներսէսի յառաջաբանը, իսկ գրքի ճակատին—թարգմանչուհու գրաւիչ լուսանկարը։ Գիրքը բաղկացած է 500 երեսից, մանրատառ. մաքուր տպագրութիւն, և արժէ՝ Պոլիս 15 դահեկան, Թիֆլիս 1 ր. 50 կոպ. ճանապարհի ծախքով հանդերձ։ Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

1—5

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ՄՕԼՏԻՖԱՈՒՄ (կօրսիկա կղզի) և ՎԻԳԱՆՈՒՄ (Գար)

ՇԵՐԱՄԻ ՑԷԼԼԻԻԼԷՐ ՍԵՐՄԵՐ (ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄ)

BERTRAND ET ALOISI



ԴԵՂԻՆ ԵՒ ՍՊԻՏԱԿ ԿՕԿՕՆՆԵՐ

Bertrand et Aloisi սերմերը՝ գնելու համար՝ դիմել Թիֆլիսի շերամապահական կայարանը, սկսած 1889 թուի հոկտեմբեր ամսից։

1—10

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 21/2 յուլիսի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ L'ALPHÉE (ԱԼՖԷ) նաւապետ CAYLUS (ԿԷՑԼՈՒՍ), մտնելով Կ. Պոլիս, Զօրտ-Լահօս և Լակավալ։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍՏ։

1—2

1822 թուականից գոյութիւն ունեցող և 20 մեդալների ու պատուաւոր դիպլոմների արժանացած

ԱՊԱԿԵՂԷՆԻ, ԲԻԻՐԵՂԻ ԵՒ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԱՊԱԿԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

1865 թ. «ԶԵՒԻ» 1882 թ.

ԻՎՆԱՏԻ ԳՈՐԴԼԻԶԿԱ ՖԻՐՄԱՅԻ

որի պահեստները գտնվում են ՎԱՐՇԱՎԱ, Сенаторская, № 19 и Граничная, № 6 ԼԻԻԲԼԻՆ, ԼՕՋ և ԲՐԵՍՏ-ԼԻՏՕՎՍԿ քաղաքներում։

Առաջարկում է իր պատրաստած իրեղէններ, այսինքն ամեն տեսակի հարթ և ողորկ ապակիներ, նոյնպէս և գոհարանման և բիւրեղանման ապակիներ, սեղանի պիտոյքներ, ծաղկամաններ, սրուակներ, դեղավաճառատան անօթներ, լամպայի պիտոյքներ և լուսամուտի ապակիներ, որ պատրաստում են բելգիական և ֆրանսիական եղանակով։

ԲՈԼՈՐՆ ԷԼ ՄԱՏՋԵԼԻ ԳՆԵՐՈՎ։

3—4 (Հ)

Дозволено цензурою, Тифлисъ 12 Іюля 1889 г.

Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.